

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Նյու Յորք

Սիրելի Սրբազան Եղբայր և հարգարժան պատգամավորներ,

Ուրախ սրտով կողջունենք զձեզ և բոլորիդ կբերենք աստվածառաք օրհնություն՝ Հարուցյալ Փրկչի Իջման Սուրբ Սեղանեն:

Վստահ ենք թե դուք բոլորդ՝ նվիրյալ հոգևոր սպասավորներ և բարեպաշտ ներկայացուցիչներ ժողովրդյան, նույն եկեղեցասեր զգացումներով տոգորված, համախմբված եք այսօր, քննարկելու և գնահատելու անցնող տարեշրջանի ձեր գործունեության արդյունքները և նախագծելու ձեր հառաջիկա աշխատանքներու ծրագրերը, հառավել շինություն ձեր ընդարձակ թեմի հավատացյալ ժողովրդյան հոգևոր կյանքի և հառավել պայծառացում ձեր եկեղեցյաց:

Մենք համոզված ենք թե ինչպես նախորդ տարիներուն, նաև հառաջիկա տարեշրջանին ձեր ձեռնարկները հաջողությամբ պիտի պսակվին թե կրոնական, թե կրթական ու մշակութային մակարդակներու վրա, մանավանդ որ անցյալ աշնան ձեր թեմին Մեր այցելության առթիվ անձամբ հաստատեցինք ձեր կարելիություններն ու կարիքները, ձեր թեմական-եկեղեցական կյանքի կազմակերպության ամրությունն ու կենսունակությունը, ձեզ բոլորիդ նվիրյալ ու միասնական կարգապահ աշխատանքը, որոնք գրավականները կհանդիսանան ձեր նորանոր իրագործումներու:

Մեր մշտական աղոթքն է որ ձեր բոլոր աղոթքի Տունները, ձեր վարժարաններն ու մշակութային հավաքատեղիները, շեն ու լուսառատ մնան Սուրբ Հոգվո շնորհներու ներքև և դուք մշտապես առաջնորդվիք մեր նախնիներու հոգիով ու անոնց թողած սրբազան ժառագության լույսերով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄՆ-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ (9 ՀՈՒԼԻՍ, 1988)

Եռանդալի սրտով, արթուն հոգիով ու նպատակասլաց համերաշխ գործակցությամբ, շարունակեցեք անձանձրույթ աշխատիլ, պահելու պահպանելու համար ձեր թեմական-եկեղեցական տիրախնամ կառույցը՝ ամբողջ ու անխռով, խաղաղ ու կենսունակ։

«Եւ արդ՝ զհանդէս սիրոյ ձերոյ և զմերոյ պարծանացն վասն ձեր, ի դոսա ցուցջիք յանդիման ամենայն եկեղեցեաց» (Ա Կորնթ. Ը 14)։

Հայրական սիրով և շրջնությամբ՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
5 մարտի 1988 թ.